



Վիճա սպ առն ԵՆՏԻՐԱՆ ԵՂՐԱՅՆ — ԴԵՆԻՐԵ

ՓԻՒՆ

- Փիւնիկ պիտի հրատարակուի ան ամսոյ 1ին եւ 15ին:
- 1.—Տոննալի կիսնքի հին ու նոր լուսնային հարցի վրայ լուրջ ու սուս նախնութիւններ. Հայոց գաղթային հոսանքին վրայ շահեկան տեղեկութիւններ, մասնաւորապէս եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2.—Արձակ եւ ոտնձգութեամբ բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգիւտութիւն:
 - 3.—Գիտական նորութիւններ, կես-ժամօր ժողովրդոց կեանքին ու բարեկեցութեան մանրամասնութիւններ, հուշակաւ եւ եկեղեցական երկերէն բաղուած:
 - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչապետի ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
 - 5.—Կիսամտնայ ընդհ. բարբառական կազմութեան վրայ հոմ ու անկողի տեղեկութիւններ:
 - 6.—Կրթական սինթէզի եւ գաւառական թղթակցութիւններ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի համար	Տարեկան	Փր. 10
» »	Վեցամսեայ	» 6
Արտասահմանի համար	Տարեկան	» 13
» »	Վեցամսեայ	» 7
Կովկասի համար	Տարեկան	բար. 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Եկեղեցին. — Պ.	Թղթակցութիւն. — ՄԻԲԻԿ
Գաղտնաբեր գրքեր. — Ս. Գ.	Իրական կեանքին (Եւալո)
Մանկանա Արքանդը. — Ս. ԲԻԲՐԱՏ	Ազգային Քրոնիկ.
Մայիսի Թագաւոր. — Վ. Ա. ՀԵ	Քաղաքական կապութիւնը.

Չեռագիրները եւ շէն գործուիլը կ'ընդհանրեն ամեն տեսակ ազգեր Նամակ, յարուած եւ բախանորդային սէտք է գրել առ Տնօրէն Ս. ԲԻԲՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE **ՔԻՆԻՍ**
 INSTITUTION CENTRALE
 LE CAIRE



ԵԳԻՊՏՈՍ

ՏՐԵԿՈՆ... 10
ՎԵՑԱՄՍԵԱՅ 6

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԻԿ Է



ԱՐՏԱՍՍՈՒՄ

ՏՐ... 13
ՎՍՑԱՄՍԵԱՅ 7

ԿՈՎԿԱՍ
ՏՐԵԿՈՆ ԲՈՂ 3



ՓԻԻՆՆԻԿ

ԿԻՍՈՍՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏՐԻ

15 ՄԱՅԻՍ 1899

ԹԻԻ 4

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Մեր մէջ ընդհանուր առմամբ այնպէս ընդունուած է որ ազգ մը կազմող անհատներուն կրօնքի կամ դաւանանքի պէսպիսութիւնը այն ազգին բարդաւածման չ'մնասիր. թերեւ այս պատճառաւ է որ չափէն աւելի անտարբեր աչքերով կը նայինը կրօնափոխութեանց: Սակայն օտարները մեզի համակարծիք չեն երևիր այս մասին: Մեր վերջին ազեափոխ միջոցին կառավարութիւնը միևնոյն վարմունքը չ'ունեցաւ հանդէպ էջմիածնականաց, Հաովմէականաց և Բողոքականաց: Նմանապէս երբ մարդիկը ճշմարտութեան առաջնորդելու պատրուակաւ Պապականք և Ամերիկացի ու Անգղիացի բողոքականք մարդսրտութեան կ'ելլեն աշխարհիս չորս կողմը, անոնց կառավարութիւններն ալ իրենց կ'օգնեն նիւթապէս և քաղաքականապէս: Արդ եթէ բատրէներ և պատուելիներ միամտաբար կը գործեն — ինչ որ խիստ կասկածելի է — կառավարութիւններ ուրիշ բան չ'են բողոքաւոր բայց միայն իրենց քաղաքական

ազգեցութիւնը ընդլայնել կրօնային քարոզութեանց քօլին տակ: Այս ձեռնարկին հետևութիւնը այն կ'ըլլայ որ տէրութիւն մը ինքզինքը այնքան աւելի հզօր կ'ըլլայ օտար հողի մը վրայ, որքան հոն իր դաւանանքին հետևողներն ստուարաթիւ ըլլան: Եւ թէև այս վերջինները իրենց ազգին յարած կը մնան զրեթէ միշտ, սակայն՝ արամաբանօրէն խորհելով՝ քանի որ իրենց կրօնափոխութեամբ կը զօրացնեն մի ուրիշ տէրութիւն, բնականաբար բուն իսկ իրենց ազգը կը տկարանայ միևնոյն արաբքով: Պէտք է ուրեմն սա եզրակացութեանց հասնիլ. 1. կրօնափոխ մը իր հարազատ ազգին ուժէն մաս մը կորցելով զայն կը տանի օտարին. 2. Ազգի մը մէջ կրօնքի կամ դաւանանքի պէսպիսութիւնը չէ թէ անմաստ, այլ ընդհակառակն՝ խիստ վտանգաւոր է:

Հին ազգաց մէջ կրօնափոխութեանց խաղաղած անմտանալի գերբը մէկզի թողլով, դեռ այսօր մեծ

ազգ մը տակնուվրայ ընող և հետե-
ւութիւնը տակաւին անստոյգ օրինակ
մը յառաջ բերել կը բաւէ, իբր փաստ
մեր ցոյց տուած ճշմարտութեան:

Չկարծուիր որ գտնուի հայ մը
որ աւելի հմուտ չ'ըլլայ ֆրանսական
պատմութեան քան հայոցս: Այս այն
ազգն է որ երբեմն իր աշխարհակա-
լութիւններով զողացուց ամբողջ Եւ-
րոպան, մեծապէս ձեռնտու եղաւ Ա-
մերիկայի ազատութեան, լիբանանի
իշխանութիւնը հիմնադրեց, գերու-
թեան լուծը թօթափել աուաւ իտա-
լիային եւն. բոլոր ասոնք քաղաքա-
կանապէս. իսկ բարոյապէս, լուսա-
սու փարոս մ'եղաւ, կ'ըսուի, բոլոր
աշխարհի: Ահա այդ ազգն է որ կը
տապալտի այսօր ճիրաններուն տակ
իր մի քանի հազար ազգայնոց, որոնք
այլադաւան են: Ի մի բան երեսուն
ութը միլիոն կաթողիկոսներ կը մաքա-
ռին քանի մը հազար հրէից դէմ:
Այս մեծամարտը խիստ վնասակար
եղաւ Ֆրանսայի, որ խիստ աննշան
դերեր միայն կրցաւ կատարել քա-
ղաքական վերջին դէպքերուն մէջ:

Արդ եթէ այնքան հզօր ազգ մը
այն աստիճան կը տկարանայ ափ
մը այլակրօնից մեքենայութիւններէն,
ապա ուրեմն չորս կողմ' ցիրուցան
այլեայլ ազդեցութեանց տակ հեծող
և թուով հազիւ հազ չորս միլիոնի
հասնող հայերս ո՞րպիսի կացութեան
մէջ պիտի գտնուինք եթէ համեմա-
տաբար ստուարութիւ այլադաւանք
ժամանակ մ' ուզեն հակառակիլ ազ-
գին բանաւոր միտումներուն:

Ազգութիւնը՝ ինչպէս երկարատև
փորձով գիտենք՝ կը պահպանուի
կրօնքով, կրօնքն ալ ունի իր աստուա-
ծակարգ պահպանները: Ո՞ր են
ասոնք, ինչու այս ինչ թեմ' տարիներ
ով առանց առաջնորդի, այն ինչ
քաղաք կամ գիւղ առանց քահանայի,
վանքերն առանց վանահայրի կը

մնան: Աղիտաբե՛ր անհոգութիւն, յա-
փշտակիչներու միայն նպաստաւոր:
Անշուշտ պիտի առարկուի որ արդի
քաղաքային կացութեան արդիւնք է
այս լքումը: Սակայն դժուար չէ հոս
թուել այնպիսի թեմեր, որոնք ան-
գորր ժամանակներ ալ թափուր մնա-
ցած են երկայն ատեններ: Բաց յայս-
մանէ «Հովիւ քաջ վանձն իւր դնց
ի վերայ ոչխարաց...»:

Բայց մեր նպատակէն դուրս է
անցեալի վրայ խօսիլ հոս. մենք
կուզենք ներկային և ապագային ըս-
պառնացող ուրիշ վտանգի մը վրայ
դարձնել մերայնոց ուշք, որպէս զի
չ'ըլլայ որ «Յեռինն եղիցի չար քան
զառաջինն»:

Իբր թէ մեր մէջ մուտ գտած կա-
թոլիկութիւնն ու բողոքականութիւնը
քիչ պառակտած էին մեզ, ահա մի
ուրիշ առաքելութիւն ալ երեսն ելաւ
մէկ երկու տարիէ ի վեր. այն է
չարթապատիւնը:

Սոյն նորամուտ աղանդը, որու
մասին մի քանի հայ թերթեր գրե-
ցին վերջերս հարեանցի կերպով,
ինքզինքը կը յորջորջէ իբր զաեալ
բողոքականութիւն. իրեն առաջնորդ
ընտրած է Հին և Նոր կտակարաննե-
րը, բնաւ չ'ընդունիր Հարց տաւ-
գութիւնները. հոգւոյ անմահութեան,
հաղորդութեան, մկրտութեան, զա-
տաստանի եւն.ի վրայ կ'ուսուցանէ
վարդապետութիւններ, որոնք առե-
րեւոյթս բոլորովին տարբեր են քրիս-
տոնէից ընդունած և ուսուցածէն: Եւ
ի գլուխ այս ամենուն, սուրբ կը պա-
հէ շարթ օրը, փոխանակ մեր կի-
րակիին, սրմէ կը կորզէ Տէրունա-
կան սիրտոսը, և զայն կը դնէ իր
նախադասած օրումն վրայ. Նորա
թէ՛ քարոզիչները և թէ՛ հեռուողները
իրենց ընթացքով ալ մեծապէս կ'ու-
րշուին միւս քրիստոնէից կղերա-
կաններէն և աշխարհականներէն:

մինչդեռ հոս քիչ շատ անձնատիրութեան զսհեր կը մատուցուին, հոն՝ ընդհակառակն՝ բոլորովին բարձի թողի եղած է Եւր: Երոյս արտաքին յաականիչն է զուարթութիւն, ժուժկալութիւն և խոնարհամտութիւն: Ոչ մի քաղաքականութեան չ'են հետեիր, և ոչ միայն մի որեէ կառավարութեան մասնաւոր շտրհաց չեն արժանացած, այլ գրեթէ քրիստոնեայ աշխարհին նոյն իսկ ամենէն ազատամիտ հոչակուած կողմերն անգամ արհամարհուած և առաւել կամ նուազ ուղղակի հալածանքի ենթարկուած են:

Մոյն հակիրճ տեղեկութեանց վրայ յինչով չ'կարծուի թէ կրնանք բարբառովին ազատ ձգել իրենց ընտրած ասպարէզին մէջ այնպիսի արարածներ, որոնք — կարծես — մեր գլխին միայն արժանի են իրենց ծիծաղելի և անհիմն մենամուտութեամբ:

Յիշենք անգամ մը այն տասներկու ձկնորս և վրանապորժ ազէսները, որոնց հիմնած հաստատութիւնը՝ հակառակ անհամար արգելներու՝ քսան երկար դարերէ ի վեր դեռ կանգուն կը մնայ, և պիտի մնայ յաւիտեան:

Շարաթապահութիւնը իր նոյն իսկ սուրբ պահած օրով աւելի վտանգաւոր է քան մի որեէ կերպ աշանդ: Արարողութեանց, աւանդութեանց, դաւանանքի և գերիշխանութեան տարբերութիւնը կրնան անհե սիլ փոխադարձ զիջումներով, բայց շարաթի և կիրակիի խնդիրը ո՛չ միայն անհետանալու այլ ընդհակառակն ևս քան զիս շեշտուելու սահմանուած է: Արդարեւ հոս ո՛չ թէ շէրքը այլ ուղղակի հիմն է որ կը հարուածի մի այնպիսի կրօնքի, որու շտրհիւ մեր ազգութիւնը պահպանուած է մինչև յայսօր:

Բայց վտանգը ո՛րքան ահարկու, այնքան ալ դիւրաւ կը վերնայ բա-

րերազդարար: Մենք զժուարտ կրքնանք մարառիլ կաթոյիկութեան և բողոքականութեան դէմ, որոնք քաղաքական առաւելութիւնը կրնան խոտտանալ իրենց կրօնակցաց. շարաթապահութիւնը խիստ հեռու կը քսուի այդպիսի շլացուցիչ յաակնութիւններէ. նա միմիայն մատնանիչ կ'ընէ յաւիտեական կեանքը որուն մենք ալ կը հաւատանք. անոր միակ շէնքն է Ս. Գիրքը՝ զոր մենք ալ ունինք: Ուրեմն ուժերը ո՛չ միայն հաւատարակչուող են այս կողմէն, այլ յայտնի առաւելութիւններ ունինք մենք — թուով և հնութեամբ: Միայն պէտք է պատերազմիլ առանց յապաղելու. թշնամայն ժամանակ չ'տանք մեր արդի քայքայուած վիճակէն օգտուելու:

Մեր բարեկրօն եկեղեցականներէն կը խնդրենք որ հաճին իրենց գրիչը ձեռք առնուլ և իջնել յասպարէզ վսեմ՝ և նախանձելի պայքար մ'է սա, որուն մէջ արիւնհեղութեանց երկիւղ չ'կայ: Մեծ ուսուցչին աստուածաբոյր և լուսատիրու խօսքերով ժողովրդեան սիրտը զօրայնել, գայթակղեալ միտքերը հանդարտել աւագ պարտականութիւնն է մեր քահանայից և վարդապետաց: Հայ ազգը միշտ հաւատարիմ մնացած է իր կրօնքին. քանիցս բիւրաւոր զսհեր առած է իր հաւատքն անխախտ և դերձ պահելու համար, և յաջողած է: Արդարեւ մենք զունդերով սուրբեր չ'ենք դնել իբրև միջնորդ մարդու և Աստուծոյ միջև, այլ և այլ անսակետով պատարակելի յաակնութիւններ չ'ունինք: Արեւելեան և Արևմտեան եկեղեցեաց մէջ պարզագոյնն է մեր Հայաստանեայց եկեղեցին, և — կը կարծենք — հաւատարմագոյնն իր աստուածային առաջնորդին գծած շաւղին: Բայց և այնպէս կրնայ ըլլալ որ մի քիչ շեղած ըլլանք ուզիղ ճամ-

բէն: Արդ կը փափաքինք զիսնալ թէ իրաւ մօլորա՞ծ ենք: Սոյն յեղափոխութեանց զարուն մէջ մեր հաւատքը, կրօնքը պէտք ունի՞ ոնէ բարեփոխութեան մը: Հակառակ դարավերջիկ և նորամուտ անհաւատութեան, նոյն իսկ շաբաթապահութեան պէս անարգուած և հալածուած մի ազանգի զիմնզները յայտնապէս կը ցուցնեն թէ մեր մէջ կը գտնուին տակաւին բազմաթիւ բարեպաշտներ, որոնց մեծ ուրախութիւնն ու մխիթարութիւնն է զՍտուած պաշտել — պաշտել՝ ճշմարիտ եղանակաւ: Ունինք այդ ճշմարիտ եղանակը: Ո՞վ

պիտի պատասխանէ մեր հարցմանց: Ո՞վ մեր անդորրութիւնն ու վստահութիւնը մեզի պիտի դարձնէ, եթէ ոչ ձեռնհաս անձինք, և անոնք զոր Հա՛յր, Հա՛յր կը կոչենք:

Ճշմարիտ հայրերը անունդէ չեն զրկեր իրենց զաւակները, և ճշմարիտ հովիւր թոյլ չ'տար որ գայլը յափշտակէ իր խնամոց յանձնուած հօտը:

Օ՞ն ուրեմն, Տ. Հարք, Ս. Հարք, պաշտպանեցէ՛ք կրօնքը, պահպանեցէք ազգութիւնը:

Գահիրէ 5 Մայիս 99 Դ.

Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ի Զ Ո Յ Ե Ր

Վերջապէս կը նշմարուի Անգլիոյ մէջ թէ՛ Արդարութիւնը շատ մ'անիրաւ վճիռներ արձակած է անմեղներու դէմ: Վերջին երեք ամիսներուն մէջ՝ պաշտօնապէս երեք անգամ «Նեքոցաւթիւն» բառն արտասանած է այն անձերուն, որոնք անիրաւ դատապարտութիւններ կրած էին: Գեոնոր Լիվրբուլի Գատական ատեանը ի Լոնտօն կը զրկէ 16 տարեկան օրիորդի մ'անպարտազիրը, խեղճ անմեղ աղջիկը 6 ամիս շարունակ բանտի մէջ ուրիշ ոճրագործ կնոջ մը յանցանքը քաւելէ ետք:

Հապրըն՝ Պրմինկէմի մօտ 1876 Օգոստոսին սկիզբները կը ձերբակալուի իբրև հեղինակ Քօք անուն ստիկան զինուորի մ'պանման. խեղճն ի զուր իր անմեղութիւնը կը ջանայ հաստատել, լալազին ազազակներով. դատաւորները մահուան վճիռը կ'արձակեն անոր դէմ, վճիռ որ սակայն ժամանակի մը համար կը մնայ անգործադրելի, որովհետև ոճրագործութեան ինչ ինչ պարագաները տակաւին չէին լուսաբանուած, Հապրըն՝ բանտին մէջ կը հեծէ ամ-

բողջ 3 տարի. և ահա՛ Լոնտօնի մէջ Քիս անուն գողը կը ձերբակալուի ուրիշ յանցանքի մը համար. հարցաքննութեան ժամանակ կը խոստովանի նաև Քօքի սպանման հեղինակն ըլլալը: Ուստի կառավարութիւնը, թէև քիչ մ'ուշ, ազատ կ'արձակէ Հապրընը, տալով անոր 1000 անգլ. ոսկոյ տուգանք մը: Իրաւ է որ աղքատի մը համար մեծ բան է այդ գումարը, ըլլայ երեք տարուան բանտարկութեան փոխարէն, բայց, ինչո՞վ փոխարինելու է բարոյական հարստահարութիւնը որ ի գործ կը դրուի անմեղի մը վրայ, վտանգելով անոր պատիւն, և ընտանիքին, եթէ ունի, ապագան:

Էտմընա կալէյ տմբողջ 43 տարի բանտերու մէջ քաւեց ոճիրը նքսիթըր Ասիսի, որ 1836ին Սէյ անուն ազարակատէրն սպաննած էր:

Բօզ անուն մարդ մ'իւր մանկամարդ կինը թունաւորած ըլլալու ոճրագործութեամբ կը դատապարտուի: Տարիներ վերջը կ'իմացուի թէ՛ Բօզի կինը թունաւորողը նոյն ընտանեաց մէջ ազատ մուտք ունեցող և այն

կնոյ մտերիմներէն մին եզած է...:

1879ի Փետրուարին՝ գիշերով կը մտնեն հարուստ գիւղացիի մը տունը, կ'սպաննեն գիւղացին, դրամները կ'առնեն ու կը փախչին: Պրաննակհամ և Մըրբի, տանը բարեկամներէն երկու անձինք, իբրև ոճրագործ կը դատապարտուին, 9 տարի տաժա՛նակիր աշխատութեամբ կը առաւալին. ի վերջոյ բուն հեղինակները կը գտնուին. իսկ կառավարութիւնն իր բարի սովորութեան համեմատ, ամեն մէկուն 800 տկան սուխոյ տուգանք մը տարով կ'արձակէ այդ երկու անմեղները:

Սակայն դատարանի զոհերը միայն Անգլիոյ մէջ չ'են տեսնուիր. անլի կամ քիչ տարբերութեամբ ամեն երկիրներու մէջ կը գործուին այդպիսի գեղձումներ:

Ֆրանսայի մէջ օրինակի համար, հարկ չ'կայ մինչև ջրհեղեղի ժամանակները բարձրանալու, որպէս զի հաստատենք թէ՛ դատարանները շատ անգամ կոյր զկուրայն վճիռներ կ'արձակեն: Լալլի թօլէնտալ, Հնկաց կառավարիչը, մահուան դատապարտուեցաւ, յետոյ իր որդւոյն ազգու ջանքերուն շնորհիւ՝ վերաքննութեան մէջ անպարտ արձակուեցաւ: Դեռ հերուն Տիփօնի շրջականներէն պարկեշտ վարժապետի մը տղան, հզօր ազգացոյցներով հատառեց անմեղութիւնն իր հօր, որ թխարանի մէջ մեռած էր իբրև եղեռնագործ: Իր հայրենակիցները զանի երեսփոխան ընտրեցին որ ամեն միջոցներն իր ձեռքն ունենայ իր գտան պաշտպանելու, ելն:

Պէլճիքայի մէջ 1869ին սոսկալի ոճրագործութիւն մը տեղի ունեցաւ. երեք հոգի ձերբակալուելով՝ մահուան դատապարտուեցան. սառնցմէ մէկուն կիներ զնաց թագաւորին սուրբն ինկաւ, ազաչեց, պաղատեց, երեքին ալ անմեղ ըլլալը վկայելով ու պնդելով,

մինչև որ յաջողեցաւ թագաւորին գալթը շարժելու. անոնց մահուան պատիժը վերածուեցաւ մշտնջենաւոր շղթայակապ աշխատութեան. տարիներ կ'ապրին այդ կեանքը. ի վերջոյ մարդ մը կուգայ և կը խստովանի թէ՛ ինքն էր բուն ոճրագործը:

Իսկ Տրէյֆիւլը... բայց մեծ անխոհեմութիւն պիտի ըլլար կանխաւ դատել այս ինքիբը, որ ամենահաստատ ըղբղներն անգամ կը ցնցէ ու կը խենդեցնէ. ա՛ն ալ կրնայ ըլլալ որ Արգարութեան սովորութեան հակառակ, մոռցուած կ'ըլլայ դատապարտել յոյս յանցաւորները:

Այս ցուալի իրողութեան հանդէպ կ'արգարանան սակայն դատաւորներն իբրև տկար մահկանացուներ, քանի որ զխտակցարար չ'են արձակած վրճիռները. բայց ինչ ըսենք այն դատաւորներուն, որոնք, գիտնալով, խղճի — եթէ ունին — կատարեալ հանդարտութեամբ մահուան վճիռներ կ'արտասանեն, մերթ քմահաճոյքի, մերթ ցեղային սխերու, կրօնային խտիրներու և մերթ ճնշումներու ազդեցութեան տակ...:

Անգլիա, Ֆրանսա, ելն. իբրև քաղաքակրթութեան ներկայացուցիչ Մեծ Ալգեր, անտարակոյս կը կարմրին ամեն անգամ որ յանուն արգարութեան անարգար անօրինութիւններ ըլլան դատարանաց կողմէ: Բայց երկիր մը կայ, ուր ինք Արգարութիւնը՝ շղթայակապ աշխատութեան դատապարտուած է, և ուր, դատաւորները Օրէնքի ուժով — ի հարկէ բաւին հականիշ իմաստով — կ'արձակեն ոճրագործներն, և կախապան կը բարձրացնեն անմեղները...: Այդ երկիրը գէպ ի կործանումը կ'շտապէ. հոն բռնապետութիւնն է, նախագործեալ բարբարոսութիւնը, որ կը վարէ օրէնքները և մարդիկնէրը:

Ս. Գ.

ՄԱՆԿԱՆՍ ԱՐՑՈՒՆՔԸ

Բանալը բերած էին զանի հօրը Քով,
 Կը հալէր հայրն իր զաւակին փախաքով,
 Մատաղ մանկիկ մ'էր, մընացած էր մընակ,
 Իմ անդրամիկ որդեակս էր այն զաղինակ.
 Մայրը թողած հեռացած էր, ո՛հ, զանի,
 Բազդին հըլու — այդ անողոր զագանի —
 Ի՞նչ հարկ մըքիլ խորը խնդրին. հա. հառօս,
 Օր մ'ուզեցի յագեցընել իմ կարօս,
 Բերել տըլի քովըս, պագի, զգուեցի,
 Տեղըս տեսաւ, հարցում ուղղեց, լըռեցի...:
 Մահկանս անմեղ նա, ուածին մէջ ընկղմած՝
 Մոռցած էի զիս, ա՛լ չ'էի տխրահած:
 Դեռ չորս տարու տղեկ մ'էր ինք, ա՛լ սա-
 կան,
 Լաւ կ'ըմբռնէր յոգնատըխուր իմ ներկայն.
 — «Հայրիկ, ըսաւ, դեռ պիտի շա՞տ մընաս
 հոս». —
 Ի՞նչ ըսէի, աչքիս համդէպ էր այն փոս
 Ուր զըլորել կ'ըսպառնար զիս տարակոյս.
 Բանտէն ելնել... յիմարութիւն մ'էր այդ
 յոյս.

Ուստի աճաւ մ'ալ գրկեցի, բիւր համբոյր
 Դըրոշմեցի թաղմ աւերուն վարդաբոր.
 Եւ չափեցի պարապութիւնն իմ սրտի.
 Ըզգացի որդի որ սրտին խոր խըլըրտի...:
 Ես բանտարկեալ մ'էի, եկաւ բանտապան,
 Ազդեց ինձ թէ բաժանման ժամն էր դիպան,
 Հընարգանդիլ սլէտք էր, մնղմով գրկեցի,
 Տարի մլինչն դուռն ուր տըղան տընեցի
 Կար կըսպասէր: Երկաթապատ վանդակին
 Բացին դռնակն: Փրփուր ալիք կուտակին
 Կ'ամբոխեն զիս: Դուրսն արծամիլ սլէս կե-
 ցած,
 Աչերն յառած, մըմնջով կը մնչէ ցած,
 «Ո՛ւր երթամես հայրիկ, մայրիկըս չը կայ» —
 Եւ նայեցայ, մանկանս արցունքը տեսայ.
 Թողի, փախայ խոց, մըքեցայ խըցկիս խոր,
 Նետեցի զիս ոնրագործացն ի ժըխոր:
 Եւ բուռն ըրի որ մտնամ իմ հէզ մանկան
 Արցունքն որ հուր ծըզեց սրտումս հայրա-
 կան:
 5/1/91
 Ս. ԲԻՒՐԱՏ

ՄԱՅԻՍԻ ԹԱԳՈՒՅԻՆ

Չայն տո՛ւր այգուն, մա՛յր սիրական, երբ ճեմես, ծայն տուր ագուն,
 Զուարթ նոր տարուան վրայ ի՞նչ քաղցր է տեսնել ցոլքերն արեւուն,
 Պիտի զանի ա՛լ չը տեսնեմ. վերջին է այս Ամամոր.
 Ա՛լ մի՛ խորհիւր վըրաս, երբ զիս գերեզմանիս դըմես խոր:

Արեգմուտը տեսայ, մըտաւ արեւ, թողուց իր ետին
 Հին բարի ա՛նն, հին սիրուն օրն, անդորութիւնն իմ սրտին.
 Եւ Ամամորը մօ՛տ է զալ, ըաց ինձ տեսնել չը կայ, մա՛յր,
 Ո՛չ ծաղիկը սե դժեհիկին, ո՛չ ալ ծառին վըրայ խայր:

Երեւոյի օր, դեռ Մախիսի հիւսեցինք փունջ մը ծաղկի,
 Դժեհիկին տակ, կամաչին վրա. զիս մախիս թագուհի
 Ըրին, Ա՛նոր պարկեցինք շուրջ, խորը կաղնեաց անտառին,
 Երբ Սայլն եկաւ կեցաւ զագաթն հրկան ճերմակ ծըխանին:

Բուրբերն ա՛լ ծաղիկ չ'ունին, սաւ է պառեր պողոտան,
 Ապրիլ կուզեմ լոկ տեսնելու նորէն ծիւնը ծմեռուան,
 Կուզէի որ ծիւնը հալէր, վերէն արեւը շողար,
 Ա՛խ ծաղիկ մ'ալ տեսնէի, դեռ չ'նուողած դալկամար:

Պիտի կանչէ կնձնիւն, բարձըր ծառէն հաւն աւլւնու.
 Մեռած մարգէն պիտի ձգէ քարաղբին ծայնը խապոտ,
 Երեւոյի ալ պիտի գարնան դառնայ օտար ծոփերէ,
 Իսկ ես, մի՛նակ, պառկիմ ո՛վ մար, վերմակիս տակը քարէ:

Սրբաբարհի լուսամուտէն, գերեզմանն ալ վերեւ,
Առաւօտուն կանուխ պիտի փայլի գարնան ջինջ արեւ,
Բլրին վրա ի ագայակէն դեռ չը խօտած շէկ աքլոր,
Երբ քունդ է թանձրը, մայր, եւ երբ լուռ է աշխարհը բոլոր:

Երբ ծաղիկները նորէն գան, մայր, լոյսին տակ նըւաղուն,
Ալ զիս պիտի չ'տեսնես, գիշերն, երկաթը մութ դաշտերուն,
Շուքին տակը ճիշդ դժմիկին պիտի թաղես զիս, մայրիկ,
Եւ մերթ տեսնել իս պիտի գաս, հոն, ուր հանգչիմ ես հեզիկ:

Չար, անառակ եղած եմ, բայց պիտի հիմայ ինձ ներես,
Չըւէս սուտջ, պիտի ներես, իմ միակ մայր, համբուրես.
Մի լար, երբէք մի՛ լար, չըլլայ կոկիծդ այնքան դառն ազդու,
Չըլլայ ցաւիս, մայր, ինձ համար, ուրիշ գաւակ մ'ունիս դու:

Գիշեր բարի, գիշեր բարի, վերջին ողջ կսցն երբ ըսեմ,
Եւ երբ տեսնես որ յաւիտեան թողում ես մեր դըրան սեմ,
Մի տար որ գայ էֆֆին տեսնել, իմ շիրմըս չը ծաղկած
Պիտի ըլլայ նա լաւագոն քան զիս, որ բնաւ չեմ եղած:

Ամբարին վրայ պիտի գանէ երգիքին իմ գործիներ,
Թո՛ղ որ առնէ, իրն են, ա՛լ ես տծունները չեմ գործեր,
Բաց երբ մեկնիմ, ըսէ իրեն, վարդենույն հոգ թող տանի,
Չոր լուսանցքը դրի սրահին, թաղարին ալ յափուկի:

Գիշեր բարի, անուշիկ մայր, ծայն տո՛ւր դեռ տիւ չ'ծագած,
Գիշերն ի բուն հսկեմ, առտուն զիս կը գտնես քընացած.
Բայց կուզէի գուարթ նոր տարուան տեսնել ցոլքերն արևուն,
Երբ որ ճեմես, մայր սիրակամ, ծայն տուր ազուն ինձ այգուն

Թարգմ. ՎԱՏԷ

ԹԷՆԻՍՐՆ

9/5/99

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 12 Մայիս 99
Բարեկամ, եթէ հակառակ խօտու-
մանս՝ մինչև այսօր չ'կրցայ գրել քեզ,
առտնաւը ուրիշ տեղ մի՛ փնտռեր,
ո՛չ ծալթիժան և ո՛չ նիւթերու պա-
կասութեան՝ ոչլ գրելու այն տեսակ
մը անտրամադրութեան մէջ որմէ
տակց կը բանտի մարդ՝ ճիշդ ինչպէս
կը բանտինք ջերմէ կամ անգարէ.
Կարծես գործարանական բջիշներու
փրայ ներգործոյ բնական ազդակները՝
միօրինակութեան ձանձրոյթէն բըռ-
նուած՝ քմահաճոյքը կ'ունենան եր-
բեմն իրենց գործանէութեան շրջու-

նակէն դուրս ուր նետելու ու կուգան
կ'արշաւեն մինչև ուղեղին կամ մըտ-
քին խղիկներու սահմանը և եթէ ոչ
տեսական՝ սուժամեայ կերպով կը վա-
րեն ու կը անօրինեն մեր խորհելու
զգալու, խօսելու կամ գրելու եղա-
նակը, և ողջութիւնը ու ժամանակը
եւ ստուգիս, ս՛՞՞՞ չէ գիտած թէ անձ-
րևոտ և ամպամած երկինք մը, տե-
րևաթափի դարկահար վերջալըյս մը,
կամ գարնանային արեշատ ու գեղա-
ծիժալ օր մը, մայիսի վարդագեղ
առաւօտ մը՝ որչա՛փ տարբեր տպա-
ւորութիւններ կը թողուն մեր մարին

ու արտին վրայ. որչա՞մի տարբեր ուղ-
 զութիւններ կուտան իրերն ու երևոյթ-
 ները դասելու և ըմբռնելու մեր սե-
 փական եզանակին և կը մզեն մեզ
 ընելու կամ ըլլալու ինչ որ չ'պիտի
 ուզէինք գործել կամ ըլլալ մեր սո-
 վորական վիճակին մէջ: Եւ սակայն
 իմ գրելու անտրամադրութիւնս — են-
 թագրելով թէ հոգեկան վիճակ մըն
 է այս ալ — մի՛ կարծիք թէ արդիւնք
 ըլլայ վերեւ յիշածներու հետ քիչ
 շատ նմանութիւն ունեցող արիչ կար-
 գի բնական ազգակներու. փասն զի,
 պէտք է խոտուելով, մազի չափ
 չեն կրնար փոխել իմ տրամադրու-
 թիւններս՝ ո՛չ խաղաղ կամ աշխարհ
 Միջերկրականը, ո՛չ մեր հին թաղա-
 կանութեան անկումը և նորին ընտ-
 բութիւնը, ո՛չ այս տեղի կուսակցա-
 կան աննպատակ ու վնասարեւ պայ-
 քարները և ո՛չ ալ ձեր Սրբազան Տե-
 դապոստին կանոնաւոր երթեկը ատ-
 կէ հաս, ասկէ հոգ, ազկէ... : Այս
 ամենը անտարբեր կը թողան զիս:
 Բայց կան բարոյական կարգի այն-
 պիտի գործակներ որ աւելի զօրաւոր,
 աւելի ազգու և ապուստոս են անմըք
 մեր միջավայրին կամ մանուսնդ մեր
 ցեղին յատակ խել մը բարքերու ազ-
 գատութիւններ են որ կ'աճին կ'ու-
 ճանան ամեն որ և սրմք կարծես ա-
 շելի կը չեչաւին՝ ամեն անգամ որ
 յատաճ խնտկան երևոյթ մը, հանրու-
 թեան օգտին նախրուած հիմնարկու-
 թիւն մը կամ ձեռնարկ մը մէջտեղ
 ելնէ, ինչպէս, օրինակի համար Փիւ-
 նիկի երեսմը: Ահա՛ ա՛յդ կեզատ
 բարքերն են որ կը ջրտան ամեն ըզ-
 գացում, զգուանք կազդեն մարդ տ
 և թո՛ղ գրելու՝ մտածելու անգամ
 տրամադրութիւն չեն ձգեր ուղղափա-
 և անկեղծ անձերու վրայ:

Եւ իրօք՝ նախանք, զչարումը, ա-
 պերաշտութիւնը — ստիտ ցեղային
 ըլլալու սպառնացող ախտեր — լայն

ապարէզ գտած ըլլալ կը թախն վեր-
 ջերս՝ իրենց բովանդակ թափովը ե-
 բեւան դալու և կատարելու այն պրժ-
 գայի գերը սրուն սահմանուած են:
 Մանուսնդ Փիւնիկի հրատարակու-
 թիւնը քար գոյթակցութեան գար-
 ձած կ'երևի կարգ մը նախանձոտնե-
 րու համար սրմք թմբած իժկու
 պէս անսովոր ջերմութեան մը պէտք
 ունին կարծես խորտելու գալարելու
 և իրենց թանախից սլաքով խայթելու
 նոյն իսկ զիրենք տաքցիող ձեռքերը:
 Արդ, խնդա՛լ թէ ոչ լալ պէտք է
 այդ սղորմիներու վրայ որ մէկէն ի
 մէկ բանդէտի հովեր առած կարուկ
 վճիռներ, խիզախ պատգամներ կ'սր-
 տան աջ ու ձախ այնպիտի խնդ իրնե-
 րու մասին սրմնի խելք հասցնելու հա-
 մար ո՛չ պահանջուած մտային զար-
 գացումը ունին, ո՛չ ուղիղ գատու-
 թեան նշոյլը իրենց խելապատակին
 մէջ. անզուտոյ յաւակնոտներ են ա-
 սմք ու պէտք է կրկնել ահա ի
 տեսակէն նախանձոտներ որ՝ նե-
 խած մօրուսն՝ րու նման անշարժ ու
 կայուն կը մնան ցորչափ անակնկալ
 հասնք մը կամ ուժգին հով մը չ'փո-
 թօրկեր իրենց ազմու ջրերը. բայց
 անգամ մը որ առիթը ներկայանայ
 — թէ և յաճախ իրենք կ'ստեղծեն
 զայն — կը տագնապին կը խռովին և
 ամեն ճիգ կը թափեն իրենց հան-
 դիտար վրդայիլ շարժառիթները՝ սր-
 չափ ալ անմեղ ու հանրօգուտ ըլլան
 խեղդելու ո՛չնչացնելու: Աւ կը խորհիմ
 թէ ոչա՞մի իրանք ունին եղեր հի-
 ները, հանճարեղ մտած լմով մը՝ ո՛չ
 միայն բնութեան ուժերն ու երևոյթ-
 ները նկարներով կամ քանդակներով
 խորհրդանշանելու, այլ նաև մարդ կա-
 յին կիւքերը մարմնաւորելու, վերա-
 ցակումը, խնայողական իր թականայր-
 նելու՝ իրենց ամենէն նւթին, ամենէն
 կոշտ գիծերով միանգամայն, Պէրկե-
 րէտի Սպարտէն սկսեալ մինչև Մէսու-

զի օձախնի գանկը:

Շատ բնական էր որ Փիլիսիիոյ երևումը անոր շուրջ յարայանէր համակրութեան ու հակառակութեան զգացումներ և նոյնի տար թեր ու գէժ թուիրներու ու գիտար թիւններու: Անոնք որ անոնց թիւն ունեցան համակրանք և սրտախթեամբ ողջունելու հանդէսից հրատարակութիւնը, կը խորհին թէ որչափ որ Փիլիսիի իր առաջին քայլերուն մէջ դեգեկտն և կատարելութեան բոլոր պայմաններուն գոհացում ստալէ հեռի է գեռ և ըստ այնմ ունի իր քննադատելի կողմերը, որ արժանի է նիւթական և բարոյաւնան քաջալերութեան՝ հասնելու համար նահանջութեան կատարելութեան թէ՛ և միւս կողմէ իր իրական և ենթակողմական բոլոր թերութիւններով հանդերձ՝ եզրագոտի մէջ հայ թերթի մը՝ գոյութեան նահանջը լեյնելով՝ պատուաբեր երեւոյթ մը կը դառնայ եզրագոտեակ հայ գաղթականութեան համար և այլքան ստուարութիւն օտար թերթերուն մէջ իր յանուակ տեղը կը գրասէ Փիլիսիի իրը հայութիւնը ներկայող թերթ մը:

Բայց կան նաև այնպիսիներ, նահանջաւորներն ու չքաշողները, որ իրան շարժանք՝ իրենք զիրենք ազգասէր, գրասէր ու գրայգէտ հոշոտիւր: Անափառութիւնն ալ ունին և իրենց միայն կը վերապահեն հրատարակագրութեան մենաշնորհը, սճիտի մը շափ ծննդը կը գտնեն հայ հանդէսի մը հրատարակութիւնը և ամեն անաշխատիւ միջոյններ ի գործ կը գնեն արդիւնքը կամ գտածոքանելու անոր շնորհման կողմէնը. սուսէ սուս, խնայութիւնստեթ կը պաշտին համազելու համար այս ու այն՝ անամեղի խճճանքնեքով ու չարամիտ քննադատութիւններով՝ որ մեղսեն Փիլիսիի և բուժանորդ չգրասին, մինչև ինչ կ'ընեն թէ ասոնք թղթմանն յոնձնուած

թերթերը՝ իրենց հասցէին չհասնած չեխսէ ընելու ստորին հարքն ալ ի գործ գնելու կը զիջանին եղեր:

Բարոյականի այս աստիճան անկում քիչ անգամ տեսնուած է, եթէ հաշտի չաւանդը նախ արտասահմանի մէջ հրատարակուող հանդէսի մը — որ պղտպէս օգտակար ու շահեկան խումբադրութիւն մը ունի — հիւրընկալած երկար լրբճուկ մէկ վէպը որու հեղինակը՝ կ'ըսուի հաս թէ՛ բարերարեալ մըն է որ իր վէպին հերոս ընտրած է նոյն ինքն իր բարերարը՝ ներկայելով զանի իբր անաշխատութեան ստորին տիպար մը. մինչդեռ հաս բոլորովն հակառակը կը ճանչցուի այդ բարերարը որու միակ յանդանքը եղած է թերևս հրէշօրէն ապերախտի մը բարիք ընելու շափ բարի ըլլալ: Երկրորդ՝ գործեալ արտասահման հրատարակումը հայ թերթի մը մէջ տեսնուած մը կ'արժանատիեանող յոգուած մը կ'արժանատիեանող որու հեղինակը բաներ մը ըսել ու զեր է թէ և Փիլիսիի վրայ, բայց քիթը բերանը գարձուցելէ առանց մէջէն կարենալ ելնելու՝ ի հարկէ չ'արժեր կարիճներով զբաղիլ և ո՛չ խակ յիշեցնել այդ անունը կրող ուրիշ մէկ անասունին և գորտի՛ն առակը. բայց ինձ համար ինչ որ յառկան շանական է, գարձեալ այն տեսակ մը անաշխատութիւնն է, չըսելու համար բարոյական անկում, որը ունեցած է յիշեալ թերթին խմբագրութիւնը՝ ոչ միայն թերթնալով հրատարակողի տարականձ կարողանութեան մը մէջ՝ զոր ունէր գտնէ երկու առգով շնորհատրելու հրատարակութիւնը Փիլիսիի սրտ խմբագրի ինչչալէս կը ըսեմ, պատճառնեթ ունէր յուսմալու այդ պարտականութեան կամ տարումը, այլ և սուսայն նախ հիւրընկալելու իր միւսնակներուն մէջ յարձակումը կան և յոյսանալէս թշնամու կան ողծով մրտնուած զրոյթի մը:

Փիլոսոֆի գէմ:

Ինչպէս կը տեսնես, բարեկամ, բաւականապէս ազատութեան օրինակը կ'ազդէր անկի վերէն վար քան թէ վարէն վեր ազդասէր, զրապէս, խնայելի, փաստաբան՝ կերերու հակաշրջումով մը այն բարձրութեան մէջ ուր իրենց գոտթիւնը վրիպակ մըն է՝ սպիտակութեան, պարտաճանաչութեան և բարոյականութեան դասերու և յորդորներու կը կարօտին՝ ինծի ու քեզի պէս և ուրիշ շատերուն պէս հասարակ մահկանացուներու կողմէն սըրուած:

Տեղը այս ազգային գործերուն վրայ առ այժմ կարևոր բան մը չ'ունիմք թեղ հազարդերու միայն, ինչպէս դուք ձեր եօթնամեայ քաղաքականը լուծեցիք արձակեցիք, նոյնը բոլոր մեր հոս մեր հինցած թաղականութեան և նոր մը բնարեցիք: Իրանի է որ ձեր եօթնամեայ թաղականին և մեր հին թաղականութեան միջև կային մէկէ սուրի նմանութեան կէտեր որոնք՝ չեմ գիտեր հոգեբանական ինչ կապերով հաստատուած էին իրարմէ բոլորովին անկախ և երեք չորս ժամու անջրպետով մը անշատուած այդ երկու վարչական մարմիններուն մէջ. — նմանութիւններէն մին, ինչպէս գիտես, կը կայանար իրենց հնութեան կամ երկարամեայ պաշտօնավարութեան մէջ որ՝ թեև քիչ շատ արդի նաւոր և գահացուցիչ սահմանադրական օրէնքները կը ծաղրէր և այս իսկ էր որ տեղի տուաւ ժողովրդային դան, ատանայ ու գրգռեցութեան և առայժմ բերաւ երկուքին ալ անկումը: Նմանութեան երկրորդ կէտն էր վարչական այն եղանակը՝ որ գիլիատատութեան կը մօտենար գոնէ իր արտաքին ձևին մէջ, և մէկ երկու ճարպիկ անգամներ օգտուելով իրենց պաշտօնակիցներու քարեմատութենէն ու ծայրայեղ վտու-

հութենէն՝ վճարար և յանձնադատուան կը ոնօրինէին և կը մատակարարէին ազգային գործերը և հաստատութիւնները, այդ վճարականութեան և անուղղակի կերպով զրամէն թեղաբուած օգտուէտ դադու փարներու արհամարհանքին մէջ փնտռելով իրենց փառքը և համարը:

Այժմ, միակ բանը որ կ'սպասուի մեր նոր թաղականութենէն — և իրատեսք ունինք սպասելու — այն իմաստուն, շրջահայեաց և ժողովրդական շահերու համաձայն ուղղութիւնն է զոր պէտք է ունենան — և մեծ վտասահութիւն ունինք այս մասին — մեր կրթութեան, անտեսական և կրօնական հիմնարկութեանց նիւթական և բարոյական մատակարարութեան մէջ, զգուշանալով մանաւանդ կրթական յարկին սեմերէն ներս մտնելէ կուտակական պաշարներու, անձնական հակառակութիւններու և վէճերու անխորթ ու գայթակղական տեսութաններ և ես մեծ հաւատք ունիմ որ նորընտիր թաղական խորհրդայ պատուայ ժան անգամները, որչափ ալ իրարու տարակարծիք զանուին ինչ ինչ խնդիրներու նկատմամբ, կատարեալ համաձայնութեամբ և համբարաշխութեամբ պիտի վարեն իրենց խնամքին յանձնուած ազգ. հաստատութիւնները:

Վերջացնելու համար նամակս, որ արդէն բուական երկարեցաւ, սա ալ բռնիմ որ երբ մեր վարչական մարմինները, ըլլայ քաղաքական ըլլայ թաղական, կատարեալ գիտակցութիւնն ունենան իրենց պաշտօնին և համբարաշխութեան ու անաչառութեան ըսկըտնքներով չարժին, գրեթէ աւելորդ կամ լոկ ձև մը կըլլայ առաջնորդի մը ներկայութիւնը, և այս գերազանցօրէն ճշմարիտ է եգիպտոսի համար մանաւանդ ուր արդէն շատ անձուկ է գործունէութեան ասպարէզը. ուս

տի անիմատո կը գտնեմ ես այն ջանքերը որ ժամանակէ մը ի վեր կ'ըլլաին այս կամ այն եկեղեցականին վրայ հիացողներու կողմէն՝ Եզիպտոս սի առաջնորդական գահին վրայ բազմեցնելու համար իրենց հիացման առարկան, երբ նկատենք մանաւանդ թէ այդ ջանքերը կը կատարուին ո՛չ թէ անոր համար որ Եզիպտոս առաջնորդի մը պէտք ունի, այլ թէ՛ սմանց հիացումը գրաւող այս կամ այն եկե-

ղեցականը պէտք ունի Եզիպտոսի պէս առաջնորդական օթոսի մը և այդ ջանքերու հեղինակները պէտք ունին նոր դիրքեր ատրայնելու։ Մեզ համար բուական են մեր վարդապետները ու քահանաները, և ձեզ համար ալ բաւական է կործնւմ ձեր տեղապահ պաշտանը՝ եթէ սակայն ինք գործունէութեան ընդարձակ ասպարէշ փընտռելու հետամուտ չէ։

ՄԻՐԻԿ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

(Ե Ա 40)

Ձիւնորը մեկնեցաւ, Արիֆ Սուլի-հի դառնալով.

— Հիմայ կուզայ, գիտես ինչ հեռագրել պիտի տամ. Բ. Դուռը պիտի գրգռի երկու բառով. Ձեյրուկն ապստամբեցաւ, շուտով պիտի հաւատան հոն ու պիտի նախարարները հաւարուին, խորհուրդներ պիտի ըլլան, կայծակի պէս պիտի հասնի լուրը Երւրդը, արքունիքը պիտի սարսի, վերջապէս.

— Բայց, ընդհանց Սալիհ, հետեւանքը.

— Յիմար, կը կործնէ թէ Պուլտոյ մէջ գտնուին ըզեզներ որ հեռագրին իմաստը վերլուծելու չափ խորհիլ գիտնան. Պուլիս, քաղաքներու մայրը, տեսակ մը կոյանոց է, ուր գեղուած են ընկերային գիրտերը, զոր մարդկային ընկերութեան հոսանքը թափած է հոն, զանազան շրջաններու մէջ և զանազան պայմաններու տակ. ես քեզ ինչ ըսէ, հեռագիրը հաղիւ կարգացած, Մեծ-Եպարքոսը պիտի ցնցուի, ու պիտի շտապէ ցնցելու իր շրջապատը. ինչ կ'ըսես, Ձեյրուկն ապստամբեցաւ թո՛ղ լուռի մէկ անգամ, ու բոլոր մտքերը պատրաստ են ընդունելու այդ լուրն իբրև ամե-

նաստոյգ, դեռ քանի մ'օր առաջ, Պուլիս կատարուեցաւ նմանը չ'տեսնուած Յոյցը, բանտերը լեցուեցան արդէն և ուրիշ հաստատութիւններ կը պարպուին գաւաճախ ու ապերախտ հայերը հոն արգելելու.

Այդ Յոյցը պզտիկ բան չէր, վաղը կը տեսնես գուն. խիտ անտառի մը մէջ ձգուած կայծ մ'էր ան, բռնեկեցաւ ու պիտի բռնեկեցնէ բոլոր ծառերը, փայտերը, չոր թէ՛ դալար, պիտի վառին հաւասար. քիչ մը համբերէ՛, պիտի տեսնես որ ամբողջ անտառը մոխրակոյտ պիտի դառնայ. և — ըզեզը յանկարծ կարող անցնող մութ մտածումով մը — այդ մոխիրներուն վրայ պիտի շինենք մեր բազղը, պիտի մեծնանք, բարձրագոյն աստիճանները պիտի ստանանք, աստիճանները յո՞նք սեփեթրու պիտի ըլլամ և անոր համար տարիներով ասուապելու վկայագրի հարկ չ'կայ, բառ մը միայն օրհնեալ — բերնէն — արտասանուած, պարզ իրսէ մը, պիտի նուիրագործէ զանի... Սալիհ, հոս քիչ մը այլալալած, վրայ բերաւ. — Իսկ ես. — Դուռն ալ քու բաժինը պիտի ունենաս. առիթն է կ'ըսեմ, հասկցիր, ո՛չ միայն

մենք, այլ և մեր բոլոր արքանեակները, զորձակիցները (որոնց մէջ պատկառելի դերք մը բռնած են մանուանդ քանի մը հայեր, յատկապէս այս զորձագութիւններուն և ա՛յս օրուան համար ստեղծուած ու պատրաստուած), ամենքն ալ պիտի վարձատրուին:

Բ.

Չէյթունի Զօրանոցը հարաւային բլուրին վրայ շինուած է. քաղաքին վրայ կիշխէ այդ բլուրը, սակայն իր վրայ իշխող ուրիշ բարձրութիւններէ չընտապատուած է: Զօրանոցը՝ 300 զօրք կը պահեն, պատահականութեանց դէմ՝ պատրաստ զանուելու համար, բայց այդ զօրանոցի կարեւորութիւնը կը նուազի այն պատճառաւ որ, զօրքերն ապրելու համար պարտաւոր են քաղաք իջնել իրենց մնանդը գնելու լեռնայիներէն, իսկ խմելու ջուրը կուգայ արևելքի կողմէն, Սասնաձորի միջոցով մենաստանի մօտակայքէն, այնպէս որ կռուի ժամանակ անօթի ծարաւի մեղներու վրտանդը միշտ ներկայ է հոն, զօրանոցի պահապան զօրքերուն համար: Այդ գօրծիցի հարաւային մեծ դրան վրայի կեօշիը նստած էր Սալիհ բաշա. նոյն օրը Մարաշէն եկած, Չէյթունի բովանդակ գաւառակին տասնորդաց ցուրքերը ածուրդի հանելու պաշտօնով, հետն ունենալով հայ բժիշկ մը հէֆիս Ապուճան: Այն օրը, շուրջը շարուած բազմած էին լեռնականաց մեծամեծները, որոնց համար բաշան անձանօթ դէմք մը չէր: Ամենքն ալ գիտէին որ Ազիզ բաշայի հռչակաւոր պատերազմէն վերջ զսկսուած Չէյթունի առաջին Գայլուգում Սալիհ էֆէնաին իր, որ այդ անգամ բաշայութեան արագոտով Մարաշի կարապարիչ կարգուած էր: Բայց որչա՛ր զարգաց մէջ քիչ փոփոխու-

թիւն չ'էր կատարուած Սալիհի վրայ, մազերը ճերմկած էին և սակա կը հազար ինք — կուրծքի ախտէ կը տառապէր — փճացած կեանք մը կը քաշկուտէր, կեանք մը, որ սահմանուած էր անթիւ մատուաչ կէտերը ուտելու: Սալիհ կերպարանափոխ եղած էր բոլորովին, իր վաղեմի ծանօթները հազիւ կրնային զինք ճանչել. բան մը կար սակայն որ անփոփոխ մնացած էր անոր մէջ, ցեղին ու կրօնքին մարտանդութիւնը, որ չափազանց զարգացում ու մեռնող աւած էր, անցեալի մէջ Չէյթունի լեռնականներէն կրած անարդանքներուն յիշատակէն, որ, դռնն ու տխուր, Սալիհի ըղեղին մէջ բռնած էր, ու ի վերջոյ վրէժխնդիր ոգի մը ներշնչած էր այն ստեր ու անուղղայ թուրքքին, որ հիմայ Մարաշի կատավարիչ, եկած էր Չէյթուն իրր թէ տասնորդները ածուրդի հանելու պաշտօնով՝ սակայն քովի բժիշկն ինչ զորձունէր հոն:

Բարերարի կերպարանք մը հազած Սալիհ սկսաւ, խօսքն ուղղելով մեծամեծներուն.

— Ազաներ, ես ձեզի եկած եմ ո՛չ թէ աուրբերու, այլ մեր վեհ. Սուլթանին երախտիքներն, ի զորձ գնելու համար. ձեզի ձրի բժիշկի, ձեր արիւնէն ու ձեր մտքիցէն. հոս պիտի մնայ, սրչափ աստն որ պէտք ըլլայ, ձեր գաւակները պիտի պատուաւատէ: Աչքովս ակամ եմ ու փորձով գիտեմ որ Չէյթունի մանուկներէն մեծ մասը ծագկախտէն կը մեռնի. քառորդ դար մ'աւաջ հոս էի, ա՛ս ինչ է, մէկ բնակիչ աւելցած չէ. օգին, ջրին նրմունն արգեօք ուրիշ երկիր մը կը գտնուի: Բայց, ինչու համար չ'պիտի ածի բնակչութիւնը. զարմանալի է, ստի տեսակ մը անխղճութիւն է՝ զիտնալով զիտնալով դուք ձեր տանքը կ'աւրէք: Հիմայ մեր Տօքթ. Ապուճանը

կ'աններ, հետերնից բազաբը կը տա-
նիք, բոլոր աներունմանուկները կար-
գաւ պատուաստել կուտար, ու աշ-
խարհի զլծառաս փատիշահին գոհու-
թիւն կը մատուցանէր:

Մեծամեծները քանի մը վայրկեան
սպասելէ ետք մեկնեցան, հետերնին
տանելով բժիշկը: Իսկ Սալիհ, քաշ-
ուեցաւ սենեակ մը, Մարաշէն զըր-
կուած նամակները կարգաւ սկսաւ:
Կէնքը հեռագհետէ կը պայծառանար,
Արիֆի քաջալերիչ խօսքերէն, կ'սգե-
ւորուէր. ժամ առաջ զարմն աւարտել
ու Մարաշ վերադառնալու հոգէն՝
կ'սկսէր մեծաբայլ չափել զօրանոցի
երկայն սրահը, որ կը բացուէր իր
զրապետեկէն առջեւ: Արիֆ կը պատ-
ուիրէր նամակին մէջ որ պատուաստն
ու տատանարգի տարեկան արձուրդը
կարելի եղած փութով առաջ տար-
ուէին, որպէսզի այնուհետեւ կարգը
զար պահանջելու Ձէյթունի արա-
զակները, երկրին խաղաղութիւնն ու
բնակչայ հանգստութիւնն ապահո-
վելու համար, նամակը՝ սոյն յետո-
գրեալն ունէր: «Հալէպի եակօն կա-
տարեալ հաւատարմութիւն ուխտած
է մեր ծանօթ ծրագրին իրականա-
ցնելու: հարկաւոր դիրութիւններն
ալ կը խոտանայ տալ, անի մեր
հոգին է և ոյժը, երանի թէ հոս
հետս քերած ըլլայի...»:

Պատուաստը կատարուած, արձուր-
դը վերջացած, քաղաքին մէջ սուզը
կը տիրէր: Քաշան քանի մ'օր երկան
չ'երաւ, փոզվուրդը խուլ մանչիւնե-
քով լեռները թեզացնող առիւծի մը

պէս իր կորիւնները՝ կուլար: Գերեզ-
մանատան ճամբան, ամեն օր կը յա-
ճախէր յուղարկաւոր ամբսիւր, օրը
30—40 զագաղ կը համբէին: որոնց
էին այդ մեռելները: Պատուհաս է
կը մրմնջէին պատանները, 1863ի հըն-
տախտը նորագուած կը կարծէին.
բայց սա՛ կար շուարեցնող որ միայն
մտապաշ սերունդն էր որ կը մեռնէր:
2—8 տարեկան, ամենայն ալ մանչ,
այլիկ մը չ'կար: կասկած ու սուս
կուս, մէկը չ'կար որ կրնար մեկնել
այս անմեկնելի գաղտնիքը՝ կոտորու-
ծը կանխամտածուած ծրագրի մ'ար-
դիւնքն էր. մտքերը տակաւ տագնա-
պալից կը գանձային, դառի մը՝ սճիւր
մը ներկայութիւնը կը նշմարուէր այժ
եղերական տեսարանիս մէջ. և սուս
կայն, կատարածը կատարած էր, զո-
հերը, միմիայն մաապաշ մանչեր, կը
չտանային երթալով, միեւնոյն ցաւերը:
միեւնոյն ախտանշանները, միեւնոյն
տանջանքները կը կրէին: Մարմնին
պատուաստուած տեղը՝ վերք մը կը
զոյտնար, կ'ուռնար, մարմը կա-
պուտակ գոյն մը կ'ստանար, կապոյ-
տը կ'ըլլար մանիշակ, և մանիշակին
կը յաջորդէր զալուկը, որ կուզար կը
նստէր անմեց մանկիկներուն երեսին
վրայ և կը մեռնէին, ամենքն ալ նոյն
մահով: Այսպէս 8—10 օրցան մէջ
334 մանչ մանուկներ տարին թաղե-
ցին գերեզմանատան մէջ, ամենքն
ալ զոհ թանաւոր պատուաստի, զոր
հետը քերած էր շէքիմ Ապուճանի
բժիշկ-գաւաճան եղեռնագործը:
(Եւրոկակեղի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մայիս 10 թուով հեռագրէ մը կ'իմանանք հայերու թէ՛ բազմաթիւ ձերբակալութիւններ եղած են ի Պոլիս, և թէ՛ Գիւսպանները բացարձակութիւն պահանջած են Բ. Դունէն: Միևնոյն եղերա-կատակերգութիւնը, հայկական հարցի պատմութեան մէջ, կը կրկնուի միևնոյն թատերարարմին վրայ, բայց չեմ կարծեր թէ՛ գոնուին սակաւին հայեր որ այնչափ կարեւորութիւն տան գեսպաններուն բացարձակութիւն պահանջելուն՝ որչափ աւելի կ'զգածուին հայրենակցոց ձերբակալութիւններէն. եթէ կայ իրակամութիւն մը, հայուն յարստե անվեր-, ջանալի տանջանքն է. իսկ եթէ կայ առեղծուած մը, երսպական բարոյ-յազուրկ տէրութեանց միջանու-թեան ձեն է: Ասոնք աղէկ. Սուր-թանին նպատակակէտը, կոչումն է հայերը հալածելը, Գիւսպաններուն ալ արուեստը, պաշտօնն է բացարձակութիւն պահանջել կամ շատ շատ սպառնալը: Հապա ինչ ըսնք Եգիպտոսի ամբարձրագալթականութեան գլխուն իմնող երկաթէ գաւալունն, որ սակայն բաշայի մը, պէյի մը, կամ ընչեզ ջոջի մը ձեռքը արուած է:

Ամիսներ առաջ եգիպտահայոց ընդհանուր հաւանութեամբն ու օրինաւոր ընտրութեամբ առաջնորդ կը խնդրուի Ամնն. Մ. իզմիրլեան սըրբաշանը, որ կը խոնարհի ընտրու-առջև, իր կա հին ու հաճութիւնը յա-լով: Անգին, Պատրիարքարանի կոզմէն, չենք գիտեր կամ չենք ուզեր գիտնալ թէ ինչո՞ւ համար ոյժ չը արուիր այդ ընտրութեան և մինչև անգամ Նորին Սրբաշնութեան կ'առաջարկուի հրաժարիլ, Պոլսոյ Պատրիարքարանը աշատելու համար երկու սուրի մէջէն: Նախկին Ս.

Պատրիարքն պնդողուելի կը մնայ, և մինչ այս մինչ այն, Գահիրէ ու Ազերբայճան, հանրագրութիւններ կը ստորագրուին Ազգ. Պատրիարքարանի և ուրիշ պաշտօնական մարմիններու ուղղեալ, իզմիրլեան Սրբազան Հօր առաջնորդական ընտրութեան վաւերացումը խնդրող. ստորագրելոց թիւը կը հասնի 500է աւելի Ազերբայճանի և 450է աւելի Գահիրէի մէջ, և զարմանքն այն է որ այդ հանրագրութիւնները կը խմբագրուին նոյն իսկ այն անձանց գիտութեամբ ու ձեռքով, որոնք այսօր փութոյ պըն-գութեամբ առաջ կ'ուղեն տանիլ նոր առաջնորդի մ'ընտրութիւնը, այսօր վաղը ժողով գումարել տալով միանգամ ընդմիշտ խեղդելու համար ժողովրդին ձայնը, որ կամ իզմիրլեանը կ'ուղեւ կըսէ և կամ ոչ ոք, Տեղապահը հերիք է, բաւական է որ գիււանական գաւերու մէջ չը բռնուի իր աններելի բարութեամբը: Հո՞ս ալ ձերբակալումներէ կը վախնայ ժողովուրդը, որ չ'կրնար ձայնը բարձրացնել և հասկցնել թանձրամիտ ժողովականաց թէ՛ ազգի մը ճակատագրին հետ խաղալը գիւրին չէ, թէ՛ ժողովուրդին կակնն ի գործ գնելու համար և ո՛չ թէ այս ինչ կամ այն ինչ ջոջին կամակատար ստրուկներն ըլլալու համար գրուած են այդ նուիրական պաշտօնին գլուխը, փամանակն է որ քիչ մը սանձ գրուի ապօրինի սանձգումներու, որոնք զըժբաշարար ժողովրդին տուգանքովը կը պտակուին: Խնդիր է գիտնալ թէ՛ Այվազե սնի մ'ընտրութեան վրայ այդչափ պնդելու ինչ զօրուոր պատճառ կայ, և թէ՛ ո՞վ կրնայ երաշխաւորել որ այս պայմաններով Եգիպտոսի առաջնորդական գահէն փու-

չիւր չը պղծինեկեղեցականի մը ներքի,
որուն արժանիքը կը նսեմանայ իր
զժբալըութեան կա՛յ յանցա՛քին բով
որ ուրիշ բան չէ եթէ ոչ՝ իղմիր-
բեանի համար զլայցուած պաշտօնի
մը գլուխն անցնելը:

Վերջին պահուն կ'իմանանք թէ՛
Տեղապահ Սրբազան հայրը կամայ

ակամայ հրաժարականը տուած է,
որ անսխալապէս ընդունուած է Տեղ-
ւոյս խառն ժողովէն: Նաև Այվա-
զեանի ընտրութիւնը յետաձգուած,
և առաջնորդական ընտրելի նշանակ-
ուած են Երէցեան և Գուրեան եպիս-
կոպոսները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Քաղաքականութեան վերամտան
է, խորհրդարանական արձախուրդ-
ները վերջացան, և Գահլիճները բա-
նակիւնները վաղը կ'սկսին. բաւա-
կան երկարատե խաղաշատեր չըջանէ
մ'ետք, նորէն պիտի ունենա՛ք սրտի
զոզեր, գիւանազիտական ձգտումներ,
ներքին ու արտաքին պատերազմի
երկիւզներ, տարաձայնութիւններ.
Հանդարտինք սակայն, չչուկը անդին
չպիտի անցնի և մենք նորէն պիտի
կրնանք անվտանգ համարիլ մտաշուտ
արձախուրդներուն ուր ամեն բան
անչարժութեան պիտի դատապար-
տուի: յետոյ պիտի գայ անակնկալը
և այսպէս, շարունակ: Քաղաքական
աշխարհի մէջ խօսքեր ու խոստումներ
չառ կ'ըլլան, իսկ գործեր ու գոր-
ծողութիւններ, որոնք պիտի վճռեն
նազգերու ճակատագիրները, զանգաղ
են ու հազուադէպ: Այնքան արմուկէ,
այնքան յուզումէ, իբր պարզ օգուտ
գործատր դասակարգին համար, ու-
չինչ: Հեռագրական ու լրագրական
գործակալութիւնները լոկ ինչպէս նաև
առևտրական աշխարհը, այժմեան
յուզման ելեէջի խաղերէն օգտուելով՝
իրաց ներկայ վիճակը պիտի շահա-
գործեն:

Հիմակ ամեն բան հանդարտ է; ո՛չ
մէկ կնճիւ հորիզոնին վրայ: Ռուսիան
ե՛ք Անգլիան, տօնավաճառի մէջ հա-

մ.աձայնող գոզերու պէս վարուեցան,
իւրաքանչիւրն իր շահուն համար
գործելով ի Չին, և հիմայ, այս եր-
կու հսկայ տէրութիւններէն ամեն
մէ՛լը՝ միւսին խաղ մը խաղացած կը
թուի գոնէ երեսյթէն դատելով. ան-
դին, Մայրագոյն Արևելքի մէջ, ողջա-
գուրումներ կ'ըլլան, տաղին, վերէն
ու վարէն, ասոյեանական յառաջխա-
ղացութիւններ կը տեսնուին Ռուսիոյ
և Անգլիոյ միջև. Պարսից ծոցին մէջ
բան մը պիտի դառնայ, և խիստ մօ-
տիկ է պայթիլը կիրքերուն ու-
րոնց զապուիլը շատ տարակոյս կը
վերցնէ, մանաւանդ հիմայ որ Չէկոսլ-
կիցոսքեան ուրուականը կանգնած է
մէջտեղ:

Ճարտնը կամաց կամաց կամաց
կ'սկսի հասկնալ թէ՛ եկած հասած է
ժամանակը ձեռք տալու իր գրացի
զեղին ցեղին, որպէս զի նախ՝ ինք
ընտիր պատառ մ'ստանայ երկնային
կայսրութեան ժառանգութենէն, երկ-
րորդ՝ որ տակաւ սապատակող եւրո-
պական հոսանքին դէ՛ր գնէ: Բույց,
նայինք, Չինու պիտի արուի՞ ժամա-
նակ օգտուելու իր մարդասէր գրաց-
ւոյն ձեռնառութենէն: Ամերիկացիք
ամեն օր յաղթութիւններ կը տանին
նորանոր և ամեն օր քայլ մ'առաջ
կ'ընթանան:

Այսակիցիք իբրեց աւերումները

կը դարձանեն:

Փօրթուզալ, ձեռքը ծալած նըստած է:

Ֆրանսա, զարագլիսու ցուցահանդէսը կը պատրաստէ խաղաղիկ:

Եռես-նորվեկիա՝ անջատուածի շարժումը կը շեշտէ աւելի քան երբէք:

Իսալիա՝ երկայնակեաց կը դանդաբէլուի նախարարութիւնն և ժամանակն եկած կը կարծէ ուրիշներու թողլու այդ բեղուն պաշտօններն, ի հարկէ ո՛չ առանց շահու և բարձի:

Կեռմանիա՝ կ'ամփոփուի ինքն իր մէջ:

Պալլաւեան նահանգները՝ նոր նոր նախարարութիւններ կը կազմակերպեն ու կ'սպասեն նոր նոր պայքարներ խմբելու:

Աւստրիա՝ նոր Բարեւոյնը, զուր ջանքեր կ'ընէ իր ներքին գծոհարկութիւնները — որոնք գծապարտուր արմատացած շարիքներէ կուզան — խեղդելու:

Փուրիա, բոլոր այժը կը թափէ ինքզինք ազատելու եւրոպական աւերակեանց խնամակալութիւնէն:

Եգիպտոս ալ Նեղոսի ողբումներուն աչքը սնկած կ'սպասէ, իսկ Հայաստան կը յուսայ և աւելի կը յուսայ:

Պակիսի ծանրակշիւ և ուշադրու է կայութիւնն ի Պեշմիս: Հոն մանաւանդ, ընկերվարական շարժումը կ'առանայ վրդովեցնող համեմատութիւններ: Գործադուր, որ սկիզբէն միայն 10000 գործէ բաշտմանը կը հաշուէր, վառօգի մուխին պէս կը ծուլանայ, և այսօր գրեթէ 100000ի կը բարձրանայ թիւն անոնց որ պիտայ կը ցուցնեն և կ'սպասեն երկրին անստեական, ու ձեռարուեստական կայութեանը: Իրան է, շարժումը վարէն կուգայ, սասրին յարեկերը կը ծփին ու կը պղծարեն ընկերային կարգին մակերեսը: և միշտ

այսպէս եղած չէ, և միթէ այս կերպով չեն սկսիր յեղափոխութիւնները...: կը տատաչիս, կը սանջուխ; անօթի կը մնաս, կ'առքով փառքով անցնելը կը տեսնես անայ որ քրտախնդրով ու արիւնով հարստացած են, և ի վերջոյ կ'ապաստանին: Իսկ ուսմը, երկար ատենէ ի վեր անդիւրած, կը պայթի: Ուրեմն այդ կողմէն հարկուներ ո՛ր է...: Արգեօք փոթորկով պիտի վզըջանայ, ահա՛ ինչ որ գետ շենք կրնար նախատեսել. ո՛րչափ քիչ բան պէտք է, — օրինակի համար, պարզ շանթարդել մը — կայծակը զսպելու համար: Հոս՝ մարդապան; հոն՝ հաշտարար:

Բայց ո՞վ կրնայ անտարբեր մնալ տեսարանին առջև ժողովուրդներուն, որոնք կը մարտահն արգարութեան և ազատութեան համար, անիրաւութեան և բնակալութեան դէմ, ըլլան անոնք Պէլճիքացիք, ըլլան Յոյները, ըլլան կրէսացիք, ըլլան ֆիլիպպեանները...: Մենք Հայերս, շատ լուգիանք թէ՛ ո՛րչափ արցունք, ո՛րչափ կտուտ, ո՛րչափ դրկանք ու ո՛րչափ արիւն պէտք կ'ըլլան՝ կազմելու համար այն ահուկի Սմբողջը, որուն անունը սակայն ո՛րքան քննարկ է. Ալլաաութիւն:

ՎՐԻՊԱԿ

Ներկայ թիւին մէջ ապագրական երկու սխալներ սպրդած են 56րդ էջի 30րդ տողին մէջ «աշխուրթիւններու» և 45րդ տողին «պէլթերէտի»: որոնք պէտք է ըլլան, «աշխուրթիւններու» և «Պէլթերէտի»:

Le Gérant, J. MOUNIER